

ԿՐՑՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

Եստ հին ժամանակներից՝ եօի, անձնաւորութեան երկրպագութեան և այդ անձի հաճոյքի և բարիքի համար ամբողջ մարդկութիւնը կուր էր յայտարարել այն բոլոր անձանց դէմ, որոնք յանդգնում էին մասնանիշ լինել այդ տեսակ կեանքի բոլոր պակասաւոր կողմերի վրայ, որոնք այդ տեսակ կենցաղավարութիւնը գտնում էին անպատուութեան բանական մարդ արարածի համար, որովհետեւ անձնաւորութեան բարիքն ու հաճոյքը ձեռք էր բերւում բազմաթիւ անմեղների ալի արցունքի և դառն աշխատանքի շնորհիւ, որովհետեւ այդ տեսակ կեանքի հետեւանքն էր աւարաւորութիւն և նեղութիւն, մահ և սարսափ, ստրկութիւն և անհաւասարութիւն:

Հաճելի չէր Աստուծուն մարդկային այս այլանդակ կեանքը, նա իւր ստեղծած աշխարհում տարբերութիւն չէր մտցրել արարածների մէջ, բոլորին հաւասարապէս մասնակից էր արել իւր ստեղծագործող ձեռքի պատուներին, իսկ մարդիկ այժի իրաւունք մտցնելով, խախտել էին կեանքի Աստուծագիր սկզբունքները՝ սէր և ընդհանուր եղբայրութիւնը: Իբրեւ Աստուծոյ կամքի քարոզիչ, իբրեւ Աստուծոյ պատգամաբեր՝ յայտնւում էին մարդարէներ, որոնք աներկիւղ հնչում էին ճշմարտութեան քարոզը և ցոյց տալիս մարդկանց, որ այդ չէ կեանքի, մարդուս գոյութեան նպատակը, որ անձի պաշտամունքը դէմ է Արարչին և մարդկանց նպատակը պէտք է լինի վերստին մարմնացումն այն գրախտային կեանքի, որից մարդկութիւնը զրկուել էր հէնց այն օրից, երբ եօի պահանջն ու հաճոյքն յայլմահարեցին և նրան մոռացնել տուին

Աստուածադիր առաջին պատուէրը: Ճշմարտութեան քարոզից սարսափած՝ եսասէր և եսապաշտ մարդկութիւնը, ճիշտ է, երբեմն սթափւում էր, աշխատում ուղղուել, բայց նորից շեղւում, նորից մոլորւում էր և բռնութեան, հալածանքի, խոր դժբերի և բանտերի մէջ, կամ սրով մաշում էր այդ տարօրինակ պատգամախօսներին և նորից սկսում իւր ցօփ և անարդար կեանքը:

Գթած Արարիչը չէր տանում Իւրադիր օրէնքների այսպիսի եղծումն, սքանչելագործ ձեռքերի արարած աշխարհի այս աստիճանի այլանդակ փոփոխութիւնն և այս պատճառով աշխարհ ուղարկեց Աստուածորդուն—Աստուածամարդուն՝ իբրև կենաց բանի քարոզ:

«Ես եկի, զի զկեանս ունիցիք և առաւել ևս ունիցիք», ասում էր Նա, պատուիրում. «սիրեցէք զմիմեանս, որպէս ես ձեզ սիրեցի» և աւելացնում—«չկայ աւելի մեծ սէր քան երբ մարդս իւր անձը զոհում է բարեկամի համար». Նա այս ասելով պահանջում էր հրաժարուել անձնաւորութիւնն ու եսը պաշտելուց և այլոց ծառայել, բռնորին հաւասար ընդունել և նպատակ դնել երկնայինի՝ դրախտի մարմնացումն այս երկրիս վերայ: Ճշմարտութեան կիզիչ հուրը շրթունքներին և լոյսն աչքերին, դէպի տանջուած մարդկութիւնն անհուն սիրով սիրաբլ բեցուն, Նա յանդիմանում էր աշխարհի մեծերին, քահանաներին, հարուստներին և դպիրներին, մատնանիշ լինում նրանց սխալ կենցաղավարութեան վրայ և կծու լեզուով ցոյց տալիս նրանց գործի, կեանքի և դաւանանքի տարբերութիւնը:

Եւ մարդիկ չը տարան կենաց բանի քարոզը, չուղեցին խանդարած տեսնել իրենց կեանքն ու քունը և Աստուածորդուն մատնեցին, չարչարեցին և խաչելութեամբ մահուան դատապարտեցին:

1871 տարի սրանից առաջ Երուսաղէմի փողոցներում մի չըտեսնուած իրարանցում կար: Իրար էին խառնուել մեծ և փոքրը, հարուստը և աղքատը, դպիրն ու քահանան, դատաւորն ու զինուորը, և յաղթանակով, ծաղրով և քրքիջով ուղևորւում էին դէպի Գողգոթա:

Այդ յաղթական դնացքով ընթացողների առաջից կորած քամակ, ահագին, ծանր խաչն ուսին, դանդաղ քայլում էր ճշմարտութեան քարոզը փշով պսակած, հակառակարկաների, տանջուած ու դուռնատ, կիսամերկ և մի միայն սփածանների կապած: Դեռ հեռու էր Գողգոթան, դժուար էր, շատ մեծ էր անարդար մարդկութեան բարձած խաչի ծանրութիւնը Աստուածորդու տկար մարդկային մարմնի համար և նա ընկնում էր նրա ծանրութեան տակ, կարծէք աւելի լրիւ կացուցանելու զօրաւորների կատաղեցրած ամբօխի յաղթական խնդութիւնն ու ծիծաղը և նորանոր ծաղրի և տանջանքի տեղիք տալու նրանց, Վերջապէս մի երկրագործի օգնութեամբ Յիսուսն իւր խաչով հասաւ Գողգոթա, հասաւ կրելու իւր համարձակ քարոզի և խիստ յանդիմանութիւնների պատիժը, հասաւ այն տեղ՝ խաչի վերայ մեռնելու, ինչպէս դատապարտել էր նրան յանցաւոր և անարդար աշխարհը: Եւ այդ աշխարհն յոյս ունէր, որ այնուհետեւ կապրի անգործ ու խաղաղ և կը շարունակի իւր նախկին կեանքն ու քունը:

Իսկ անհուն սիրոյ և ճշմարտութեան համար դժուար էր մի միայն Գողգոթայի ճանապարհը, դժուար էր աշխարհի բարձած ծանրութեամբ այնտեղ հասնելը, բայց երբ հասաւ, արդէն յաղթանակը կատարեալ էր: Աստուածորդուն, մեղաւոր մարդկութեան Փրկչին, խաչեցին երկու աւազակների մէջ, որովհետեւ այդպէս էր անձնապաշտ մարդկութեան զատառտանն ու իրաւունքը, նա այդպէս էր վերաբերում սիրոյ և եղբայրութեան քարոզչին և յանցաւոր մահապարտներին, այդ էր նրա հոգեբանութիւնը: Աստուածորդին իւր կեանքի վերջին րոպէներին, խաչի վրայ դամուած, ցոյց տուեց Իւր երկնաւաք լինելը: Նա փոխանակ հառաչանքի և տրտունջների, փոխանակ բարկութեան և վրէժխնդրութեան իրեն մատնողների, չարչարողների և խաչողների դէմ, երկնային սիրով լցուած դէպի դատող մարդիկ, աչքերն ուղղեց երկինք ու աղաղակեց. «Հայր ներիր սոցա, զի ոչ գիտեն, թէ զինչ դործեն»:

Նա մեռաւ խաչի վրայ, փակուեցին Նրա կենսաբուխ շրթունքները, դադարեց քաղցրախօս լեզուն և հանգան Նրա լուսափայլ աչքերը: Խնդացին խաչի մօտ հաւաքուած աշխարհի մարդիկ, ծափ զարկին, նորից մի քանի անգամ ծաղրեցին և այնէ պատրաստուած էին հանդիստ ու խաղաղ տուն դառնալ, երբ երկինքն ու երկիրը սկսան միասին ողբալ մարդկութեան ամենամեծ անարդարութիւնը: Արին ու լուսինը խաւարեցին, տաճարի վարադոյրը պատռուեց և մեծ երկրաշարժ եղաւ: Մարդիկ սարսափած ցրուեցան Գողգոթայից և չէին կարողանում հաշիւ տալ իրենց՝ անցած դարձածի մասին:

Փրկչին դադարեց աշակերտող Յովսէփ Արեմաթացին և Նիկողիմոսը կարողացան իրաւունք ստանալ Պիղատոսից Յիսուսին թաղելու և թաղեցին մօտակայ պարտիզում փորուած մի գերեզմանում, որտեղ ոչ ոք չէր թաղուել:

Մարդկանց ձեռքով թաղուեց Աստուածօրդին, կենաց բանի քարոզը, մահկանացու կարծուած ճշմարտութիւնը:

Խաչել տուողներն ու խաչողները, թէև տեսել էին Յիսուսի մահը, թէև գիտէին, որ Նրան թաղեցին, բայց երկիւղն ու կասկածը լցրել էր նրանց սիրտը՝ նամանաւանդ տեղի ունեցած արտակարգ երևոյթները գիտելուց յետոյ: Նրանք յիշեցին, որ Աստուածօրդին Յիսուս ասում էր, որ պէտքէ մեռնի և թաղուի, բայց երբօրդ օրը յարութիւն կառնի: Նրանք հասկացան, որ երկու աւազակների հետ և նրանց խաչերի մէջտեղի խաչի վերայ խաչուածը սովորական մարդ չէր և կարեւոր գտան դգուշութեան ամեն միջոցների դիմելու: Սրանք իրենց սրտի խորքում զգում էին, որ իրենց պատճառած մահը վերջնական չէ և այդ պատճառով կնքեցին ճշմարտութեան դամբարանն ու պահապաններ կարգեցին, որ ոչ ոք չը մօտենայ և Նա քայքայուի ու ոչնչանայ հողի տակ:

Սխալ էր մօլորուած մարդկութեան հաշիւը և ծիծաղելի էին նրա ընտրած միջոցներն ու յոյսերը: Ճշմարտութիւնն երկրիս ծոցում կարողացաւ թաղուած միայ մի-

միայն երկու օր և երրորդ օրն յարութիւն առաւ հրաշափառապէս. «ոչնչացրեց մահն ու աշխարհիս կեանք պարզեց»:

Քրիստոս յարեալ, միթէ սորանից աւելի մեծ տօն կարող ես երևակայել, ճշմարտասէր եղբայր. միթէ սորանից աւելի վեհ օրինակ կուզես կեանքիդ համար նոյն այդ կեանքի արհաւիրքով տանջուած եղբայր. միթէ պարզ չէ քեզ համար մանկանացու տեղովդ անմահութեան՝ յարութեան հասնելու ճանապարհը: Արիացիր քրիստոնեայ եղբայր. ճշմարտութիւն, աւետարանական ճշմարտութիւն սիրիւ ու գրկիւ, անվախ գնա սիրոյ և ընդհանուր եղբայրութեան շաւղով. թող Աւետարանի գծած շաւղից շեղուած մարդկութիւնը խաչ, երկաթեայ՝ խաչ բառնայ ուսիդ, թող փշով պսակի ճակատդ, անարգի և վարդապոյն արեամբ ներկի քեզ ճշմարտութեան ծառայ և զինուոր լինելուդ համար: Մի վհատուիր, մի կարծիր, թէ մինչև Գողգոթա չես կարողանալ հասցնել մարդկանց ձեռքով ձուլած խաչդ: Փոյթ չէ. կը գտնեն մի վաստակած հալալ ու մաքուր աշխատաւորին, նրան քեզ օգնական կանեն և դուք միասին կը տանէք այն մինչև Գողգոթա:

Իսկ այնտեղ, այնտեղ անմահութիւն է և ճշմարտութեան պատուանդան, և այդ ճշմարտութիւնը նա աւանդեց մեզ՝ — անձնազոհ սէր և հաւասար եղբայրութիւն քարոզելով:

Քրիստոս յարեալ, քրիստոնեայ հայ եղբայր. բաց ճակատիդ կնճիռները, գրկիւր Աւետարանն ու մի տատամսիւր Փրկչի շաւղով մինչև Գողգոթա առաջնորդուելու: Այդ է կեանքի ճշմարիտ ուղին. այդ է այն միակ կարճ ճանապարհը, որը տանում է դէպի կեանքն ու անմահութիւն, և այդ ճանապարհով միայն կարող ես գտնել յարութիւն և յաւիտենական կեանքը:

Ե. Տ. Վ. Մ.